Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Այնթապի Բյուզանդ Մարգարյանի անվան №2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ) և տարրական դասարանների (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ “Հանրակրթության մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից (հունիսի 11) մինչև հունիսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից։

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի։

Մրցույթը տեղի կունենա հունիս 29-ին՝ ժամը 12:00-ին, Արարատի մարզի Այնթապի Բյուզանդ Մարգարյանի անվան №2 միջնակարգ դպրոցում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0236)6-31-25 հեռախոսահամարով։